

Արարարականութեան ոճ:  
(Տես երես 85):

Օգացման առատութիւնը ծանրա-  
տաղտուկ չէ, ինչպէս որ է մտքի առա-  
տութիւնը. ուստի և քան զամէնն ա-  
ւելի գողտր նիւթի վրայ կրնայ առա-  
տութեամբ խօսուիլ. և այս բացատրու-  
թեամբս կ'իմանանք այն տեսակ ճար-  
տարխօսութիւնը յորում հոգին յան-  
պատրաստից և իբրև խառնիխուռն և  
անկանոն եղանակաւ մը, մեծ նիւթի մը  
վրայ սաստիկ զգացուած և անոր խո-  
րունկը թափանցած, յախուռն թափով  
մը դուրս կը ծաւալէ իր զգացմունքներն՝  
որոնցմով լցուած է, և ամէնուն սրտին  
ալ կը հաղորդէ իր կրից երազասլաց  
ախոյժը:

Եւ յա ճարտարխօսութեան ունեցած  
կարողութեանը զարմանալի արդիւնք-  
ներն Վաղղիոյ բեմերուն վրայ տեսնու-  
ած են. Վորովբայնն Վրիտէն աւելի  
սրտեր ձմեցուցած և աւելի արցունք  
թափել տուած է քան զիմաստունն և  
լայնհասն ճար Վուրտալուն, և եթէ  
համարձակելի է ըսել, քան զվսեմա-  
խօսն Վոսիւն:

Վկայ մէկը, կրսէ Վահարբ, որ  
Վրիտէնի համբաւը լած չըլլայ, որն  
որ մեր օրերուս քարոզչաց ամենէն հըռ-  
չակաւորն է: Իր յատուկ բնատուր  
ձիրքն էր այն զօրաւոր գործարանին  
կատարելութիւնը, որ առաքելական  
պերճախօսութեան կարևորագոյն մա-  
սերէն մէկն է, և որ բազմաժողով ա-  
կումբի մը դիմաց խօսողի համար շատ  
հարկաւոր է: Եւ անրակիր զանգուած  
մը շարժելու համար զօրաւոր լծակ  
պէտք է: Վրիտէնի ձայնը հեռաւոր  
գալտաց գիւղականներն կը կանչէր, և  
ընդարձակագոյն տաճարաց կամարները  
կը հնչեցընէր: Եւ յս ցանկալի բարե-  
մասնութեք հետ ունէր նաև կենդանի  
և կրակոտ երևակայութի, հասարակ  
և անսովոր նմանութիւններով ճոխացած:  
Եւ անկ սրտաշարժ և զգացեալ կերպով  
խօսքերը կ'արտասանէր որ ամէն անգա-  
ւուն քրտինքով թաթխուած ամպիւնէն

կ'իջնէր: Վօսի քարոզի մը յառաջաբա-  
նութիւնը կը յիշէ զոր 1751ին Վ.  
Վուլպիկիոսի եկեղեցւոյն մէջ Վրիտէ-  
նի արտասանելը լսեր է: Եւ Վաղղ  
մայրա-  
քաղաքին բարձր աստիճանի անձինքն  
հետաքրքրութեամբ լսելու համար հոն  
ժողովուած էին: Եւ յսպիսի ունկնդրաց  
բազմութիւն մը տեսնելով, որ իրեն  
համար նոր էր, ամենեկին չիտովեցաւ,  
այլ ընդհակառակն գեղեցկահիւս յա-  
ռաջաբանի մը նիւթ առաւ զայն, զոր  
թերևս Վօսիին յառաջ բերածին պէս  
ճարտար դարձուցած չէր, բայց գէթ  
մտածութիւնը միայն իրաւցնէ ճարտա-  
սանական էր, պէտք էր մեծ ազդեցու-  
թիւն ընել: Եւ հաւաստիկ այն կտորը, որ  
անշուշտ իր անուանը յիշատակին և  
միանգամայն Վօսիի հանձարոյն պա-  
տիւ կ'ընէ:

“Ի տեսիլ նորանշան հանդիսի այդ-  
քանոց ունկնդրացդ, թուի իմն, եղբարք  
իմ, թէ արժան էր ինձ աստէն բանալ  
զըթունս իմ առ'ի զներողութիւն ձեր  
աղերսել և եթ'ի շնորհս աննշանի ու-  
րուք քարոզչի, որ 'ի ինկրելոյն 'ի ձէնջ  
բարեաց հանձարոյ զրկեալ իցէ, յոր-  
ժամ զձերոյ փրկութենէդ ճառք 'ի  
մէջ անկանիցին: Եւ յս սակայն այսօր  
այլազգ իմն կ'իրք ազդին յիս: Եւ յս  
տրուպ եմ յանձնէ, բայց թէ ինչ առ ու-  
նայնութե անարգ խուճապիւք խոնար-  
հիցիմ, զայդ և զլիսովին հանէք 'ի մտաց:  
( )Ն անդր 'ի բաց տար' թէ պաշտօնեայ  
ոք երկնաւոր ձերումը ներողամտու-  
թեան կարօտանալ խորհիցի: Օ ի ա-  
մենեքեան դուք ո՞րք և իցէք մեզանչա-  
կանք էք իբրև զիս: Եւ յա ի երեսաց Եւ  
տուծոյն իմոյ և ձեր բախել զկուրծս իմ  
'ի պահուս յորդորեալ ստիպիմ, ես որ  
մինչև ցայսօր ընդ յարկաւ յարգածա-  
կոյթ տաճարաց զարդարութիւն բարձ-  
րելոյն պատմեալ, քարոզչի տառապե-  
լոյ՝ որ կարօտէին հացի, զխիստ ձգունս  
ապաշխարութեան. և լաւաբարոյ բը-  
նակչաց դաշտացն զհազգնալուր ճմար-  
տութիւնս հաւատոց իմոց ծանուցա-  
նէի: Վայ թշուառացելումս, և զինչ  
գործեցի զայդ: Օ տնանկան զառնացու-

ցի, զսիրելի բարեկամն Մտուծոյ, և զաննենգ և զմիամիտ մարդիկն, փոխանակ սփոփանաց և կարեկից գթոյն, ահիւ և դառնութեամբ լցուցի: Մհա աստանօր յաւագանին, 'ի մեծատունս, 'ի հարստահարողս տառապելոց, կամ 'ի յանդուգն և յանապաշաւ մեղաւորս և եթ աչք իմ թարթափին: Մհ, աստ միայն արժան էր զսրբանուէր բարբառն ըստ համօրէն որոտագոչ ազդեցութեանն հնչեցուցանել, և յաջոյ բեմիս արձանացուցանել ընդ իս զմահ սպառնալեօք վառեալ, և 'ի ձախմէ զմեծագօրն Մտուած՝ հասեալ 'ի դատաստան: Արկերուք ապա դողութեամբ առաջի իմ, որ լսէքդ ինձ արք ամբարտաւանք և անարգութ. զի ահա 'ի ձեռին ունիմ այսօր զվճիռ ձերոյ դատակրնքոյդ: Արևորութիւն փրկութեան, մահուն ստուգութիւն, և ահաւոր պահուն անստուգութի, անապաշաւ խրստութիւն, դատաստանն յետին, ընտրելոց սակաւութիւն, դժոխք, և 'ի վերքան զամենայն՝ յաւիտենականութիւն, ո՛հ յաւիտենականութիւն. այսօրիկ են ահա զորոց խօսել հանդերձեալ եմ, և զորս ձեզ միայն արժան էր պահել: Ինձ չեն պէտք ձերոցդ կարծեաց, որ գուցէ ինձ 'ի դատապարտութիւն և ձեզ 'ի կորուստ լինիցին: Մյլ մինչդեռ ես անարժան պաշտօնեայս բարձրելոյն ընդ ձեզ խօսիցիմ, նա ազդեսցէ 'ի սիրտս ձեր. զի չեմ իսկ անտեղեակ ողորմութեանց նորա: Մնդ յայնժամ առ ահի անցելոց ամբարշտութեանցդ զարհուրեալ, 'ի գիրկս իմ դիմեալ անկանիցիք՝ արտասուօք զղջութեան և ապաշաւանաց. և առ խայթ մտացդ խղճի խելամուտ լինիցիք թէ ոչ անձահս ինչ իցեմ բարբառեալ:»,

Պրիտէնի այս աստիճան ճարտար գրիչ ունենալը մէկէ մը լսած չեմ, կ'ըսէ Ահարթ. բայց այս հաւաստի է որ անկարելի էր իր խօսուածքը լսել և չզգացուիլ. և իր այն ահաւոր ձայնովը, սրբբազան տաճարին լուութեանը մէջ և բազմաթիւ ժողովրդեան մտադիր ունկրնդրութեանը ժամանակ՝ մահուան և

յաւիտենականութեան ունեններն հընչեցնելով, ամենուն վրայ դող մը կը բերէր:

Իսկ երբ ճարտարխօսութեան ուժը մտածութեանց կարգին և կապակցութեանը վրայ կայացած է, խոհեմութիւն չէ բոլորովին յանկարծաթափներչնչման ետևէն երթալ, թէ որ ճարտարախօսը երկայն բարակ ճոխաբանելով չստիպուի իր աշխուժին տեղի տալ, առանց խորն ընկղմելու և նպատակէն հեռանալու: Բայց շատ դժուարին է այս մասիս մէջ չափաւորութիւն պահելը, ինչպէս որ Պլուտարքոս յանպատրաստից խօսուած ճառերուն վրայ դիտած էր:

« Ար տեսնուի, կ'ըսէ, անոնց մէջ կարգէ դուրս անհոգութիւն և թեթեւութիւն մը. որովհետև որոնք որ ասանկ անխորհրդաբար կը խօսին, ուսկից սկսեցին և ուր լմնցնելին չեն գիտեր. և անոնք որ այսպէս առանց պատրաստութեան ատենաբանելու կը վարժին, բաց 'ի ուրիշ թերութիւններէ, չափազանց աւելորդաբանութեան կը զարնեն:»,

Մյս ալ հաւաստի է որ պերճախօսութեան զօրաւոր ազդեցութիւնն ուրիշներուն վրայ ներգործել տալու միակ միջոցն է դիտել ամենայն կերպով տեղւոյն ու ժամանակին պատշաճ յարմարութիւնը, ու իր և ունկնդրաց կրիցն հանգամանքը: Սովորական քարոզիչներն այս կողմանէ քան զառաջուց պատրաստուած քարոզատունները մեծ առաւելութիւն ունին. ինչպէս նաև ատեանի մէջ ճոխաբան փաստաբաններն՝ քան զանոնք որ պարզ իրենց գրած ատենական ճառը կը կարդան: Մյս դժուարագիւտ հանձարն ստանալու համար, զոր կը փափաքէր Յենեղոն որ ճարտասանք ստանան, մեծ աշխատութիւն պէտք է, և բնութեան ազնուագոյն ձիրքերով ճոխացեալ ըլլալու է. բայց ոմանք վարժութիւն ինչուան այնչափի կը հասնին, որ անաշխատ և բնական ճոխաբանութի մը կ'ունենան, և խօսելու միջոցին աւելի ճարտար կերպով առաւ

տարանութիւն կը բանեցնեն՝ քան եթէ գրուածքով շարադրելու ժամանակ հարկմայեցւոց համբակներն հռետորութեան վարժարաններու մէջ այս կերպով խօսելու իրենք զիրենք կը հրահանգէին, և Արասոս՝ որ այս կիրառութեան օգտակարութիւնը ճանչնալով հանդերձ, աւելի նախամեծար կը սեպէր մտածելով զրելու ջանալ, նոյն ինքն Արասոս քան զամէն ճարտարախօս աւելի առատաբան էր, իր ըրած անխոնջ պարապմունքներուն, ամբարած անհուն ծանօթութեանցն և մտածութեանցը, և ս առաւել պատանեկութե ժամանակ ըրած անընդհատ կըթութեանցը պատճառաւ :

Տաւաղութեանը մէկ օրինակ մը : Վարչապանութիւն Փլանկոսի և անոր գատախազին՝ Մարկոս Տրուտոս անունով վատահամբաւ մարդուն դէմ ատենախօսելու ժամանակ, երբ անոր ախտերն ու անկարգ կեանքը երեսը կը զարնէր, բարձր բեմէն տեսաւ որ Յունիայ ազգատոհմէն պառաւ կնկան մը յուզարկաւորութիւնը կը կատարեն. յանկարծ խօսքը ընդհատեց, և Տրուտոսին ուղղելով, ըսաւ. « Օ՛ր բազմեալ կաս, Տրուտէ. զինչ կամիս թէ պառաւդ այդ զքէն հօր քում պատմեցէ. զինչ այնոցիկ, զորոց զպատկերսն տանին ընդ դմա. զինչ նախնեացն քոց, և զինչ առ Տրուտոս, որ յարքայական իշխանութենէ զժողովուրդն ՚ի բաց թափեաց : Յոր գործ կամ ՚ի պատիւ կամ յառաքինութիւն դեգերեալ է քո՞ զոր նա երթեալ ծանուցէ նմա : Վ յաճախութիւն հայրենի ստացուածոց, այլ այդ ազնուատոհմ զարմիդ չէ ինչ վայելուչ. բայց դիր թէ այդպէս իցէ. սա կայն տես ինձ զի չկայ ինչ առ քեզ, Տրուտութեանցն վատեալ զամենայն. թէ ՚ի հրահանգս քաղաքական իրականց. այդ և ս հօր քոյ է սեփական. իսկ քո զսպասս տանն կարասեաց հանեալ ՚ի վաճառ, և զթողն անգամ թողեր յորնա բազմէն ՚ի ժամ խորհրդոց : Քիչ ՚ի մարդս զինուորական կըր-

թանաց, այլ քո ՚ի կեանսդ չիք տեսեալ զճակատ պատերազմի : Վ ճարտարասութիւն արդեօք, յորմէ թափուր ես ամենեւին, և զամենայն հնարս լեզուիդ և զբարբառոյ ծախեցեր յամօթապարտ արուեստ զրպարտողի : Առ դու համարձակիս զըյս տեսանել, արկանել զակն ՚ի դոսա, կալ յատենի, ՚ի քաղաքի, յանդիման աչաց քաղաքացեաց. և ՚ի մեռելոյն նա և ՚ի պատկերայն ինքնին ոչ զարհուրիս, յորոց ոչ միայն ՚ի նմանատիպ հաւասարութենէ, այլ և ՚ի բնակակից դասակցութեն վերջացեալ գտանիս : » Այս հատուածիս բնագիրը Յաղափս ճարտարասութիւն ըսուած մատենին երկրորդ գրքին մէջն է, ուր Մետոնիոս՝ տրամախօսութեան անձինքներէն մէկը զայն վերծանելով կ'աղաղակէ. « Ո՛վ անմահ դիք. որպիսի զօրութիւն ազդողական, քանի՞ն յեղակարծ և յանկարծաթափ : »

Արասոսէն շատ առաջ՝ Վալբա զարմանալի յաջողութիւն մը ցուցրցեր էր խօսելու, թէ ոչ առատաբանութեամբ՝ բայց գէթ ամենաքիչ պատրաստութիւն : Տես Արիկերոն անուանի ճարտարախօսաց գրքին մէջ անոր վրայ ինչ կը պատմէ : Արիոս, Արիպիոնի բարեկամը որ անուշ և յարգարուն, բայց այնչափ զօրաւոր ո՞՞ մը չունէր, երկու անգամ կարևոր դատի մը համար ատենախօսէր և չէր կրցած յաջողցնել : Այն ատեն առանց իրեն ամօթ սեպելու, ամբաստանելոց խորհուրդ տուաւ որ Վալբայի ապաւինին. անիկայ նախ յանձն չառաւ Արիոսէն ետև խօսելու, բայց վերջապէս անոնց թախանձանացը զիջանելով, ամբողջ կէս օր մը անցուց, կրտէ Արիկերոն, դատին վրայ մտածելու համար : Արիկորդ օրը գտան զինքն ամբաստանեալները՝ որ օրէնսգէտներուն մէջ կեցած միակերպ կ'արտասանէր այն եռանգեամբ որ իբրև թէ ատենանին մէջ ըլլար : Արբ հանգիսին ժամանակն եկաւ, բողբոջին վառուած ոտք ելաւ, և ատենանն որ հասաւ՝ այնպիսի ճարտասանութեամբ խօսեցաւ, որ ատենաբանութեան մէկ ծայրէն մէ-

կալը ծափահարութեամբ գովուեցաւ :  
Լ.Յս Կիկերոնի համբաւած հանձարոյ  
զօրութեն կ'իմանանք միանգամայն որ  
այսպիսի օրինակներ Հռովմայեցւոց  
մէջ խիստ քիչ կը գտնուէին :

Իսկ Յունաց մէջ յանպարաստից  
խօսելու սովորութիւնը նորանշան բան  
մը չէր : Ղեմոսութենէս պսակի ճառին  
մէջ, Փիլիպպոսի թերացւոց հետ ը-  
րած հաշտութեան լուրը տարածուելու  
ժամանակ անցած դիպուածը կը յիշա-  
տակէ այսպէս : « Քարոզն 'ի ժողովի  
անդ ժողովրդեան և ծերակուտին կար-  
դայ մեծաձայն . Ո՞ր կամք իցեն ե-  
լանել 'ի բեմ : Լ.ՅԼ չտայ ինչ որ 'ի  
ձէնջ պատասխանի : Կորա զնոյն հրա-  
ւեր երեքինեալ և չորեքինեալ, ոչ որ  
տակաւին ամբառնայ 'ի վեր , թէպէտ և  
համօրէն զօրավարք ձեր և ճարտարա-  
խօսք կային անդ յանդիման , և համա-  
բարբառ ձայն հայրենեաց թախանձեր  
զնոսա խրատ ինչ օգտակար 'ի մէջ ար-  
կանել . . . Լ.՞ որ յայնմ 'ի ստիպող վտան-  
դին ես ինքն անցի 'ի հանդէս , և ե-  
լեալ 'ի բեմ , և այլն . »

Լ.Յսպէս ամէն անգամուն որ աթե-  
նացիք՝ անակնկալ դիպուած մը վրայ  
գալով մէկտեղ կը ժողովուէին , հոն ո՞վ  
որ քարոզին այս ձայնին թէ՛ Ո՞վ կ'ու-  
ղէ խօսիլ , բեմ կ'երէր , միշտ առատա-  
բան ոճով կը խօսէր :

Կիկերոն , որ այս կերպ խօսակցութե  
մնասէն մեծապէս կը վախնար , գիտնա-  
լով հանդերձ անոր օգտակարութիւնը ,  
կ'ուզէր որ գէթ ճառին մէջ մաս մը  
խնամօք գրուած ըլլայ . վասն զի այն ա-  
տեն , կ'ըսէ , ինչ որ աւելցնես՝ պատ-  
րաստածիդ ոճն ու եզանակը կ'առնու .  
և կը նմանցընէ խօսքը նաևու մը որ երբ  
մէյնը որընթաց կը դիմէ , թէ և թիա-  
վարք դադրին , դեռ նաւը կը քալէ առաջ  
կ'երթայ : « () որ օրինակ նաւ սրար-  
չաւ՝ 'ի դադարել իսկ թիավարացն ոչ  
զկայ առնու , այլ յառաջէ յընթացն ,  
թէպէտ և ոչ ևս յանդուլ շարժմանէ  
թիոցն մղեալ . նոյնպէս և յընթացս  
ճառին՝ թէպէտ և գրեալքն սպառե-  
ցին , ճառն յառաջէ անընդհատ նոյն

իսկ գրեցելոցն թափով և նմանութիւն , »  
( Յաղ . Ղարտ . գ . ա ) :

Ինչ էր այն մեծ գաղտնիքն որով  
հռովմայեցւոց և աթենացւոց ճարտա-  
սաններն ստիպող և նպաստաւոր առ-  
թի մէջ միշտ պատրաստ էին յանպատ-  
րաստից ատենաբանելու . Գոչէն գալ-  
ղիացի անուանի փաստաբանը գիտէր  
զայն : « Խուռնախիտ ծանօթութիւնք  
և իմաստիք արժան է սկսանել : »  
( Յաղ . Ղարտ . գ . ա : )

Մահ ձկնորսին :

Լ.մէն կողմանէ Գոմոյ լճին շրջակա  
ներէն Պելլանոց եկողները ճամբայ ե-  
լաննորէն իրենց տեղը դառնալու : Մեծ  
շարժումն ու գործունէութիւն մը կը  
տեսնուէր բոլոր լճին ափանցը վրայ , ուր  
որ մարդկանց աղաղակը , զիրար կանչե-  
լուն ու պատասխան ընդունելուն ձայ-  
նը , և կամ փոխադարձաբար մէկմէկու  
բարև տալու և յանձնարարութիւններ  
ընելուն ձայները շղթաներու շառագ-  
մանը հետ կը խառնուէր , որոնք ցամա-  
քէն արձակելով նաւակներուն մէջը կը  
քաշէին : Հոս՝ մարդով լեցուն կանաչ  
մը ափունքէն կը բաժնուէր և կը սկսէր  
դէպ 'ի լճին խորերը բացուիլ . հոն՝ բազ-  
մութիւն նաւավարներու թիւերնին ջու-  
րը խոթած և քաշելու պատրաստ՝ կը  
փութացընէին ամէն նաւակ մանողները  
որպէս զի բեռերնին ամբողջանայ . ուրիշ  
մը իր պզտի նաւակին՝ որ երկու մեծ կա-  
նաւակներու մէջ արգիլուած էր , բիւ-  
հայհոյանքներով քիչ մը տեղ բանալու  
կ'աշխատէր . ոմանք ալ յաջողութե  
երկու ձեռքով թիավարելով նաւա-  
հանգստէն կը հեռանային . մէկ վայր  
կենի մէջ բոլոր լիճը նաւակներով լե-  
ցուեցաւ , որոնք իրենց բռնած զանա-  
զան ուղղութեանցն համեմատ ոման  
առագաստնին կը բանային նոր ելա-  
հիւսիսային քամին բանեցնելու . ոման  
ալ ուժով ուժով կը քաշէին ալեաց բը-  
նութիւնը դէմ կռուելով , որ մեծաւ շո-